

1733. — Լքուած խաչքարի մը վրայ .

“Կանկնեցաւ Սուրբ խաչս ի յիշատակ Զէթու
(Զէթունցի ?) Աստուածատուրի . ի թվին ՌՃՁԲ .”

1733. — Նոյնպէս Լքուած խաչքար .

“Մօրն Գագուին . թվին ՌՃՁԲ . Յիշատակ է
սուրբ խաչս բարեխօս առ Աստուած վասն կց (= կենաց)
մղտեսոնց Գրիգորին եւ ծնողացն եւ Որդւոյն Աս-
տուածատրին .”

1733. — Լքուած խաչքարի մը վրայ .

“Թվին ՌՃՁԲ .” (= 1733) . “Կանգնեցաւ Սուրբ
խաչս բարեխօս վասն Կեսարիո ի գուղէն Կարմրուկցի
Պինեսաթ Ղաւֆային եւ ծնողացն մատենսի Մկրտչին
եւ Մարիամին եւ յորդուն Արուծիւնին .”

1738. — (ՌՁԼԸ) Թուականը կը կրէ այն
մեծատարած պատկերը , որ կը ներկայացնէ Ս . Գրի-
գոր Լուսաւորչը եւ իր երկոտասան չարչարանք-
ները : Իտալական գեղարուեստի գրոշմը կը փայլի
վրան : Յիշատակարանը գրեթէ եղծուած է ներկին
թափուելով :

Կիտագրուած տեղերը բաց են , պակաս չեն :

Ա . տող . “Բագմաչարչար մեծի Գրիգորի Լուսաւորչի
ընծայեցեալ . . . Լօտովիկոս Պէլուկացէն .”

Բ . տող . “Առ ամենապայծառ եւ գերահաշուակ
Տեսուն Յովհաննիսի Պատրիարքին . . . Հայոց ամի Փրկչին .
ՌՁԼԸ .”

Թուականը կը ցուցընէ թէ նորաչէն Ս . Լու-
սաւորչի համար նկարուած է եւ կոլտի անունով
նուիրուած :

Յառաջագոյն ո՛ւր գրուած էր այս պատկերը՝
յայտնի չէ . բայց հիմայ՝ կը ծածկէ Ամենափրկչի
մատրան ներքին հարաւային պատը , նոր շրջանակի
մը մէջ :

Այս տեղ յիշենք շատ յաջող պատկեր մ՝ ալ՝
99.5 × 75.5 ս . մ . մեծ ու թեամբ , որ կը ներկայացընէ